



**ՊԼՈՒԽԴ ՄԻ ԿՈՐՅՐՈՒ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԽԱՌՆԱՇՓՈԹՈՒՄ: ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

(Երրորդ ռազմավարություն)

Երբեմն պատերազմի թեժ պահին կարող եք կորցնել հավասարակշռությունը և հուսահատվել: Միանգամից կարող եք բախվել չափազանց շատ բանի՝ անսպասելի կոպիտ սխալների և ձախողումների, կասկածների և ձեր իսկ դաշնակիցների կողմից սուր քննադատության: Վտանգ կա, որ դուք կհեղեղվեք զգացմունքներով, չեք կարողանա հաղթահարել վախը, դեպրեսիան կամ հիասթափությունը: Բայց ձեզ համար կենսական նշանակություն ունի պահպանել ձեր մտքի ներկայությունը և մտքի հստակությունը բոլոր հանգամանքներում: Այդպիսի պահերին պետք է ակտիվորեն դիմակայել առաջացող զգացմունքներին, չտրվել դրանց՝ մնալ վճռական, վստահ ու համառ, անկախ նրանից, թե ինչ հարված կհասցվի ձեզ: Թող դժբախտությունը միայն ուժեղացնի ձեր ոգին: Սովորեք հեռու մնալ մարտադաշտի քառսից: Թող ուրիշները կորցնեն իրենց գլուխները: Ձեր սառնասրտությունն ու մտքի ներկայությունը կօգնեն ձեզ չտրվել նրանց ազդեցությանը և չշեղվել ձեր նպատակից:

ԱՎԵԼԱՅՈՂ ԱԳՐԵՍԻՎՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Փոխծովակալ Հորացիո Նելսոնը (1758-1805) իր կյանքում ամեն ինչ տեսել էր : Կալվիի պաշարման ժամանակ նա կորցրել էր աջ աչքը, իսկ Սանտա Կրուզի ճակատամարտում՝ աջ ձեռքը: 1797 թվականին նա ջախջախեց իսպանացիներին Սան Վիսենտի հրվանդանի մոտ, իսկ մեկ տարի անց տապալեց Նապոլեոնի Եգիպտական արշավը Նեղոսի վրա՝ ջախջախելով նրա նավատորմը Աբուկիրի ճակատամարտում: Բայց ոչ չարաֆախտությունը, ոչ էլ փառահեղ հաղթանակները փոխծովակալին չնախապատրաստեցին այն պրոբլեմներին, որոնցով խնդրավորված էին բրիտանական նավատորմի իր գործընկերները, երբ 1801 թվականի փետրվարին անհրաժեշտություն առաջացավ լուծել դանիացիների հետ կոնֆլիկտը:

Իհարկե, բնական կլիներ Նելսոնին Բրիտանիայի հռչակավոր հերոսին, վստահել նավատորմի հրամանատարությունը: Բայց փոխարենը ծովակալությունը նախընտրեց սրբի Հայդ Փարկերին (Sir Hyde Parker), իսկ Նելսոնին նշանակեց որպես տեղակալ: Այս կոնֆլիկտը այնքան էլ սովորական չէր, եթե չասենք նուրբ: Դրա նպատակն էր անհնազանդ Դանիային ստիպել համաձայնվելու Ֆրանսիա ռազմական ապրանքների մատակարարման բրիտանական էմբարգոյին: Նելսոնը, ծայրահեղ վրդովված էր և մոտ էր իր փառավոր ինքնատիրապետումը կորցնելուն:

Փոխծովակալը ատում էր Նապոլեոնին, և վտանգ կար, որ նա շատ հեռու կգնա դանիացիների հետ հարաբերություններում և դա արդեն հղի էր դիվանագիտական ֆիասկոյով: Սրբի Փարքերը տախքով ավելի մեծ էր, քան Նելսոնը՝ հավասարակշռված և հանգիստ մարդ էր, ով ունակ էր կատարել հանձնարարությունները՝ առանց դրա շրջանակներից դուրս գալու:

Նելսոնը ճնշեց ինքնասիրությունը և ընդունեց նշանակումը, բայց առջևում տեսավ լուրջ բարդություններ: Նա գիտեր, որ ժամանակն այս իրավիճակում կարևոր դեր է խաղում: Որքան շուտ նավատորմը դուրս գար արշավի, այնքան քիչ հավանականություն կար, որ դանիացիները կհասցնեին կազմակերպել պաշտպանությունը: Նավերը պատրաստ էին արշավի, բայց շտապելը Փարկերի սովորությունը չէր: Հետաձգումը զայրացնում էր Նելսոնին, նա չէր կարող անգործ նստել: Անընդհատ վերանայում էր հետախուզության հաշվետվությունները, ուսումնասիրում էր քարտեզները և, ի վերջո, մշակեց ճակատամարտի մանրամասն պլան: Նա գրեց Փարկերին՝ հորդորելով նրան, որպեսզի բաց չթողնի նախաձեռնությունը: Բայց Փարկերը անտեսեց բոլոր դիմումները:

Վերջապես մարտի 11-ին բրիտանական նավատորմը ճանապարհ ընկավ: Սակայն, ուղիղ Կոպենհագեն գնալու փոխարեն, Փարկերը հրամայեց նավերին խարսխել քաղաքային նավահանգստից հյուսիս և նավապետներին հավաքեց խորհրդակցության :

Ըստ հետախուզության տվյալների՝ դանիացիները քրտնաջան աշխատել էին քաղաքը պաշտպանելու և Կոպենհագենի մատույցները պաշտպանական ամրություններով կառուցապատելու ուղղությամբ: Նավերը նավահանգստում, ամրոցները հյուսիսում և հարավում, ջրի վրա գտնվող շարժական հրետանային մարտկոցները, որոնք կարող են հարվածել բրիտանական նավատորմին, հնարավոր էր այսպիսի իրավիճակում դիմակայել նրանց՝ առանց հրեշավոր կորուստների: Ավելին, լոցման-

ները¹, ովքեր լավ գիտեին Կոպենհագենի ավիամերձ ջրային տարածքը, պնդում էին, որ տեղի ջրերը վտանգավոր են, քանզի լի են առափնյա ավազե ծանծաղուտներով, և որ այս հատվածներում քամիները դավադիր են:

Հրետանային կրակի տակ հաղթահարելով բոլոր խոչընդոտները արժե ա՛րդյոք դիմել լրացուցիչ չարչարաքների: Մի՞թե ավելի հեշտ չէ փորձել դուրս բերել դանիական նավատորմը բաց ծով և այնտեղ ճակատամարտել:

Նելսոնը դժվարությամբ էր կարողանում իրեն զսպել: Վերջապես նա տեղից ցատկեց և սկսեց քայլել ընդհանուր նավասենյակում՝ իր խոսքերի ռիթմին համապատասխան թափահարելով անդամահատված վերջավորությունը: Ոչ մի պատերազմ, ասում էր նա, սպասումով չեն հաղթել:

Դանիացիների պաշտպանությունը կարող էր սարսափելի թվալ միայն ռազմական գործի նորածինների համար, բայց Նելսոնը դեռ մի քանի շաբաթ առաջ պլան էր մշակել, ըստ որի կարող էր գրոհել հարավից, որտեղից ավելի հեշտ էր մոտենալ, մինչդեռ Պարկերը պահեստային ուժերով պետք է մնար նավահանգստից հյուսիս: Նելսոնի նավերը բավականաչափ շարժուն են դանիական հրետանին շեղելու համար: Բացի այդ, նա ուսումնասիրել էր քարտեզները և եզրակացրել, որ ծանծաղուտները լուրջ վտանգ չեն կարող ներկայացնել: Իսկ ինչ վերաբերում է քամիներին, ապա այժմ ավելի կարևոր էր գրոհելը, այլ ոչ թե դրանցից դժգոհելը:

Նելսոնի ելույթը ուժ տվեց նավապետներին: Նա ոչ այնքան պերճախոս հռետոր էր, որքան վստահություն ներշնչող: Նույնիսկ ինքը՝ Փարկերը, տպավորված էր, և պլանն ընդունվեց:

Հաջորդ օրը Նելսոնի նավերը շարժվեցին դեպի Կոպենհագեն, սկսվեց ճակատամարտը: Դանիական թնդանոթները, որոնք մոտ տարածությունից սկսեցին հրետակոծությունը՝ լուրջ վնասներ պատճառեցին բրիտանական նավերին: Նելսոնը նյարդայնացած շրջում էր իր «Փիդ» առագաստանավի տախտակամածով՝ հրահանգավորելով անձնակազմին: Նրա հուզմունքը այնքան բուռն էր, որը հասնում էր էքստազի: Արկերից մեկը դիպավ նրա կողքին գտնվող գրոտո-կայմին: «Մա վտանգավոր գործ է, այս օրը կարող է վերջինս լինել բոլորիս համար», - ասաց նա գնդապետին, երբ պայթյունի ալիքը քիչ էր մնում նրան տապալեր, - «Բայց հավատացե՛ք, ցանկացած գումարի դիմաց անգամ, ես չեի համաձայնի այլ տեղում լինել»:

Փարքերը ճակատամարտին հետևում էր հյուսիսից: Այժմ նա դառնորեն զոջում էր, որ համաձայնել էր ընդունել Նելսոնի պլանը: Նա պատասխանատու էր կոմպանիայի համար, և պարտության դեպքում վճարելու էր իր կարիերայով: Չորս ժամ կատաղի հրետակոծությունից հետո Փարքերը հասկացավ, որ չհասնելով նվազագույն առավելության, նավատորմը կանգնած է ջախջախման եզրին: Նելսոնը պարզապես չգիտեր, թե երբ պետք է սկսել նահանջը, և Փարքերը որոշեց, որ եկել է 39-րդ դրոշը (նավերի հետ քաշվելու ազդանշանն է) բարձրացնելու ժամանակը: Ըստ այդմ այն նավը, որը առաջինն էր նկատում ազդանշանը պետք է փոխանցեր մյուսին և այդպես հաջորդաբար: Նավապետներին այլ բան չէր մնում, քան կատարել հրամանը, այսինքն՝ նահանջել: Ճակատամարտն ավարտված էր: Երբ ազդանշանը նկատեցին «Փդի» վրա, լեյտենանտը ամինջապես այդ մասին տեղեկացրեց Նելսոնին: Փոխծովակալն անտեսեց այս լուրը: Շարունակելով հարվածներ հասցնլ դանիացի-

¹ **Լոցման**՝ նավի ուղղությունը վարող մասնագետ նավաստի, նավատար: <https://bararan.am/%D5%AC%D5%B8%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6>

ների պաշտպանությանը, նա կանչեց սպային. «Տասնվեց համարը դեռ տեղում է» (16 համարի դրոշը նրա սեփական ազդանշանն էր, որը նշանակում էր «Մեր ձամարտի մեջ մտնել թշնամու հետ»): Մյուս հաստատեց է, որ դրոշը դեռ տեղում է: «Տեսե՛ք, որ այդպես էլ մնա», - հրամայեց Նելսոնը: Մի քանի րոպե անց, նկատելով, որ Փարքերի դրոշը դեռ ծածանվում է, Նելսոնը դիմեց իր ազդանշանողին. - «գիտե՞ք, Ֆոլին, ես միայն մեկ աչք ունեմ, այնպես որ ես իրավունք ունեմ երբեմն կույր լինել»: Եվ հեռադիտակը դնելով սև վիրակապին, հանգիստ շարունակեց. - «Ես ոչ մի ազդանշան էլ չեմ տեսնում»:

Զկողմնորոշվելով սրբ Փարկերին հնազանդվելու, թե փոխծովակալի հրամանները կատարելու անհրաժեշտության միջև, այլ նավերի սպաները, այնուամենայնիվ, անցան Նելսոնի կողմը, թեև գիտակցում էին, թե ինչով է այս ամենը վերջալու, եթե ձախողվեին: Բայց շուտով դանիացիների պաշտպանությունը հաջողվեց ճեղքել: Երբ նավահանգստում խարսխված մի քանի նավեր աբորդաժի² միջոցով գրավեցին, հրետանային կրակը սկսեց մարել: Փարկերի նահանջի հրաման տալուց հետո, մեկ ժամ չանցած, դանիացիները հանձնվեցին:

Հաջորդ օրը Փարկերը, սակավախոս, շնորհավորեց Նելսոնին հաղթանակի կապակցությամբ, իսկ հրամանին չենթարկվելու մասին՝ չհիշատակեց: Փարկերը ցանկանում էր, որ այս ամբողջ դրվագը, ներառյալ իր վախկոտությունն ու չարաբաստիկ հրամանը, հնարավորինս շուտ մոռացվի:

Մեկնաբանում

Ծովակալությունը թույլ տվեց ռազմական գործերին բնորոշ սխալ, երբ մարտական գործողությունների վարումը վստահեց մեթոդապես և զգույշ մի մարդու, ինչպիսին էր սրբ Փարքերը: Այդպիսի մարդիկ կարող են թվալ հանգիստ, հավասարակշռված, նույնիսկ ուժեղ խաղաղ պայմաններում, բայց իրենց ղեկավարման ունակության հետևում հաճախ թուլություն է թաքնված: Այդ իսկ պատճառով նրանք ամեն ինչ այդքան ուշադիր են մտածում, քանի որ սարսափում են սխալվելուց, վախենում են այն հետևանքներից, որոնք կարող են ազդել անձամբ իրենց և իրենց կարիերայի վրա: Մա ի հայտ է գալիս միայն այն դեպքում, երբ այդպիսի մարդիկ հայտնվում են մարտական իրադրությունում: Եվ հետո հանկարծ պարզվում է, որ նրանք չեն կարողանում որոշում կայացնել: Այդպիսի մարդիկ ամենուր խնդիրներ ու դժվարություններ են տեսնում, իսկ ամենափոքր անհաջողությունը կարող է նրանց թամբից գցել: Նրանք տատանվում են ոչ թե տոկունության, այլ վախի պատճառով: Այդպիսի երկմտանքի ու ուշացման պահերը ճակատագրական են նրանց համար: Մինչդեռ Հորացիո Նելսոնը կյանքում և պատերազմում առաջնորդվում էր ճիշտ հակառակ սկզբունքով: Բնականաբար թույլ, փխրուն, նա փոխհատուցեց իր ֆիզիկական թուլությունը անզիջում կամքով և վճռականությամբ: Այս հատկությունները նա կարողացավ զարգացնել իր մեջ այն աստիճանի, որ իր շրջապատից ոչ ոք չէր կարող համեմատվել նրա հետ:

Յուրաքանչյուր մարտում նա կատարելագործում էր դրանք, հղկում հաստատակամությունն ու ագրեսիվությունը: Մյուս հրամանատարները նախապես վախենում էին անհաջողություններից, ձախողումներից, նյարդայնանում էին, թե

² **Աբորդաժ**²՝ նավաճանկում, ձեռնամարտ մղելու համար հակառակորդի նավը ճանկերով մոտեցնել, նավազգեռում: <https://hy.wiktionary.org/wiki/%D5%A1%D5%A2%D5%B8%D6%80%D5%A4%D5%A1%D5%AA>

ինչպիսին կլինի քամու ուղղությունը, արդյոք փոփոխություններ կլինեն հակառակորդի դիրքերում, իսկ նա այդ պահին ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում էր պլանի մշակման վրա: Ոչ ոք մարտից առաջ ավելի մանրակրկիտ չէր մտածում և չէր ուսումնասիրում հակառակորդին այնքան խորը և համապարփակ, որքան Նելսոնը: (Այս տեղեկացվածությունն օգնեց նրան զգալ, որ հակառակորդը ուր որ է երեքալու է): Բայց մարտը սկսվեց, և նա անմիջապես մի կողմ դրեց տատանումներն ու զգուշությունը:

Ինքնատիրապետումը մի տեսակ հակակշիռ է ներքին թուլության: Ձգացմունքներին տրվելու մեր հակվածության պատճառով մենք կարող ենք նյարդայնանալ մարտի ամենաթեժ պահին և կորցնել մեր կողմնորոշումը:

Մեր ամենամեծ թուլությունը հուսահատությունն է: Մենք հուսահատվում ենք և, որպես արդյունք, սկսում ենք չափազանցված զգուշավորություն ցուցաբերել:

Ձգուշավոր լինելն այն չէ, ինչ մեզ պետք է: Դա միայն մեր անկոնֆլիկտության արտացոլումն է, բախման վախի զգացումը, սխալվելու վախը:

Այն, ինչ մեզ իսկապես անհրաժեշտ է, կրկնակի վճռականություն է:

Ամրապնդեք ինքնավստահությունը, և դա ձեզ կծառայի որպես հակակշիռ: Խառնաշփոթի և անհանգստության պահերին անհրաժեշտ է ստիպել ինքներդ ձեզ վճռական լինել: Օգնության կանչեք ագրեսիվ էներգիան, դա կօգնի հաղթահարել ավելորդ զգուշությունն ու իներտությունը: Ձեր թույլ տված ցանկացած սխալ կարող էք շտկել՝ գործելով եռանդուն և նախաձեռնող: Ձգուշությունը ձեզ հարկավոր է միայն նախապես պատրաստվելու ժամանակ, բայց եթե մարտը սկսվել է, մաքրեք ձեր միտքը կասկածներից: Մի լսեք նրանց, ովքեր, անհաջողություններից ընկրկվելով, նահանջի ազդանշան են հնչեցնում: Տիրապետեք հարձակողական ոճին: Հարձակվեք, և ռազմատենչ ոգին կօգնի ձեզ գործը մինչև վերջ հասցնել:

ՌԱԶՄՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼՆԵՐԸ

Մենք՝ մարդիկ, սովոր ենք մեզ համարել մտածող էակներ: Մենք պատկերացնում ենք, որ մտածելու և տրամաբանելու ունակությունը մեզ առանձնացնում է կենդանիներից: Այնուամենայնիվ, սա միայն մասամբ է ճիշտ: Նույն չափով մեզ կենդանիներից առանձնացնում է ծիծաղելու, լաց լինելու, ամենատարբեր զգացմունքների զգալու ունակությունը: Մենք, ըստ էության, զգացմունքային էակներ ենք, ոչ պակաս, քան մտածողները: Մենք սիրում ենք ենթադրել, որ բանականությունն ու դատողությունը օգնում են մեզ կառավարել մեր զգացմունքները, բայց իրականում հազվադեպ չէ, որ հենց այդ զգացմունքներն են, որ մենք զգում ենք այս պահին, որոնք որոշում են մեր վարքը:

Մեփական ռացիոնալության պատրանքը մեզ օգնում է պահպանել ամենօրյա առօրյան: Գործերի սովորական շարքում հեշտությամբ հաջողվում է հանգստություն պահպանել, և մենք կարծում ենք, որ ամեն ինչ վերահսկողության տակ է: Բայց բավական է, որ մեզանից յուրաքանչյուրը հայտնվի անբարենպաստ իրավիճակում և ամբողջ ռացիոնալությունն ակնթարթորեն անհետանում է: Մենք բառացիորեն սկսում ենք ճկվել անհանգստության, գրգռվածության, խառնաշփոթի բեռի տակ: Այդպիսի պահերին հատկապես պարզ է դառնում, թե որքան հուզական ենք մենք: Հարձակումը՝ անկախ նրանից, թե դա սպասվում է թշնամուց, թե յուրայինից, մեզ մոտ առաջացնում է զայրության, տխրության, դավաճանության վրդովմունքի զգացում: Միայն կամքի հսկայական ջանքերով մենք ինքներս մեզ ստիպում ենք տրամաբանել, մտածել կատարվածի մասին և ռացիոնալ արձագանքել, և հազվադեպ է պատահում,

որ մեզ հաջողվում է պահպանել այդ դատողությունը, եթե առաջին հարձակմանը հաջորդում է երկրորդը:

Կարևոր է հասկանալ, որ մեր միտքն ավելի թույլ է, քան մեր զգացմունքները: Բայց դուք զգում եք այդ թուլությունը միայն կրիտիկական պահերին, հենց այն ժամանակ, երբ այդքան ուժ է պետք: Ո՛չ ճանաչողությունը, ո՛չ ինտելեկտի ուժը չեն օգնի ձեզ հաղթահարել այս խնդիրը և ուշքի գալ ճակատամարտի դժվարին պահին:

Ներքին կարգապահություն և հանգստություն - միայն դա թույլ կտա ձեզ հավաքվել և չկորցնել հստակ տրամաբանելու ունակությունը: Ոչ ոք չի կարող դա սովորեցնել ձեզ: Այդ հմտությունների մասին պարզապես կարդալը բավարար չէ դրանք ձեռք բերելու համար: Ինչպես ցանկացած կարգապահություն, դրանք կարող են զարգանալ միայն պրակտիկայի, փորձի և ինչ-որ առումով նույնիսկ տառապանքի միջոցով: Հանդարտության և ինքնատիրապետման զարգացման առաջին քայլը այս որակների անհրաժեշտության գիտակցումն է: Դրանց վրա աշխատելու համար դուք պետք է իսկապես ցանկանաք դրանք ունենալ: Իրենց տոկունությամբ հայտնի դարձած պատմական գործիչները՝ Ալեքսանդր Մեծը, Ուիլիս Սիմփսոն Հրանտը, Ուինսթոն Չերչիլը, ձեռք են բերել այն՝ հաղթահարելով դժվարությունները, սխալներ թույլ տալով և սայթաքելով: Նրանք պատասխանատվություն ունեին, և այլ բան չէր մնում անել, քան զարգացնել այդ հատկությունները իրենց մեջ կամ կործանվել: Թեև այս բոլոր մարդիկ բնության կողմից առատաձեռնորեն օժտված էին արտասովոր ամրությամբ և սառնասրտությամբ, նրանք դեռ պետք է ջանասիրաբար աշխատեին դրանք զարգացնելու և իսկական ամրության վերածելու համար:

Ստորև ներկայացված առաջարկները հիմնված են նրանց փորձի, քրտնաջան աշխատանքի արդյունքում ձեռք բերված հաղթանակների վրա:

Մտածեք այդ ուղղությամբ զբաղվելու մասին: Սրանք լավ վարժություններ են ձեր միտքը կարծրացնելու համար, որոնցից յուրաքանչյուրը մի տեսակ հակակշիռ է հույզերի անզուգական ուժին:

Մի խուսափեք կոնֆլիկտից: Ջորջ Ս. Պատոնը սերում էր Ամերիկայի ամենահայտնի տոհմից: Նրա նախնիների թվում էին գնդապետներ և գեներալներ, ովքեր մարտնչել և զոհվել էին ամերիկյան հեղափոխության և քաղաքացիական պատերազմի մարտադաշտերում:

Դաստիարակվելով նրանց հերոսությունների մասին պատմություններով՝ նա ընտրեց ռազմական կարիերան: Բայց Պատոնը միևնույն ժամանակ շատ զգայուն երիտասարդ էր և երկյուղում էր մի հարցից՝ ի՞նչ կլինի, եթե մարտում նա ցուցաբերի վախկոտություն և խայտառակի իր ընտանիքի ազնիվ անունը:

Պատոնն առաջին անգամ, որպես դիվիզիայի հրամանատար, մարտի մեջ մտավ 1918 թվականին Արգոնում դաշնակցային հարձակողական գործողության ժամանակ, երբ երեսուներկու տարեկան էր: Մի պահ ամերիկացի հետևակայիններին հաջողվեց ձեռքել հակառակորդի պաշտպանությունը և հայտնվել բլրի գագաթին, որը նայում էր առանցքային ռազմավարական դիրքին: Սակայն, գերմանական գնդացիների կրակն այնքան ուժգին էր, որ նրանք չէին կարող լքել թաքստոցները: Շուտով պարզ դարձավ, որ հետևակայիները հայտնվել են թակարդում: Եթե նրանք փորձեին նահանջել, ապա բլրի երկու կողմերից կհայտնվեին խաչաձև կրակի տակ, եթե փորձեին ձեռքել, կհայտնվեին գերմանական գնդացիների ուղիղ նշանառության տակ: Եթե մահը ամեն դեպքում անխուսափելի էր, ինչպես թվում էր Պատոնին, ապա ավելի լավ է զոհվել հարձակման ժամանակ: Բայց հենց պահին, երբ նա պետք է զինվորներին

բարձրացնել հարձակման, հանկարծ սարսափը պատեց նրան: Նա սկսեց դողալ, և ոտքերը թուլացան:

Խորքային երկյուղները արդարացան և նա վախեցավ:

Այդ պահին Պատոնը, կարոտով նայելով գերմանական մարտկոցների ետևում գտնվող ամպերին, տեսիլք ունեցավ: Նա պարզ տեսավ իր նշանավոր ռազմիկ նախնիներին՝ իրենց ժամանակի համազգեստով հաղերձավորված, ովքեր խստորեն նայում էին իրեն: Նրանք կարծես կանչում էին նրան միանալու իրենց: Ջարմանալի-որեն, այս նախնիների հայացքը հանգստացնող ազդեցություն ունեցավ երիտասարդ Պատոնի վրա: Դառնալով զինվորներին՝ նա բացականչեց «Ժամանակն է, որ ևս մեկ Պատոն գոհվի»: Նրա ոտքերը նորից ամրացան, նա ուղղվեց ու քայլեց ուղիղ դեպի գերմանական գնդացիները: Գրեթե անմիջապես, վիրավորվելով ազդրից, նա ընկավ: Սակայն վերքը մահացու չէր, նա ողջ մնաց: Գլխավորն այն էր, որ նա վերապրեց այս մարտը:

Այդ ժամանակից ի վեր, նույնիսկ գեներալ դառնալով, Պատոնն իր համար կարևոր էր համարում լինել առաջնագծում, և նա հաճախ վտանգի էր ենթարկում իր կյանքը՝ կարծես ամեն անգամ ստուգում էր իրեն:

Զինվորականի համազգեստով նախնիների տեսլականը նրա համար միշտ հանդիսացել էր գլխավոր շարժառիթը, պատվի մարտահրավերը: Ամեն անգամ նրա համար ավելի հեշտ էր դառնում վախերը հաղթահարելը: Նրա ենթականերին և մյուս գեներալներին թվում էր, թե բանակում չկա ավելի համարձակ և սառնասիրտ մարդ, քան Պատոնը: Նրանք չգիտեին, թե ինչ կամային ջանքեր են պահաջվել Պատոնից, որպեսզի նա հասնի իր քաջությանը:

Պատոնի պատմությունը մեզ երկու բան է սովորեցնում: Առաջինը, ավելի լավ է դիմակայել վախերին դեմ առ դեմ, քան դրանք վանել կամ խորը թաքցնել: Վախը ամենակործանարար զգացողությունն է, այն կործանարար է սառնասրտության համար: Իսկ անհայտ վտանգի առկայության դեպքում այն միայն աճում և ամրանում է, և մեր բորբոքված երևակայության մեջ գծագրվում են ամենադաժան պատկերները: Գիտակցաբար ինքներդ ձեզ դնելով այնպիսի պայմանների կամ իրավիճակների մեջ, որոնցում դուք ստիպված կլինեք դիմակայել վախին, դուք կկարողանաք ընտելանալ դրան, և, որպես արդյունք, սուր անհանգստությունը կդադարի ձեզ տանջել: Այն զգացումը, որ դուք հաղթահարել եք խորը վախը, ձեզ վստահություն և ամրություն կտա: Որքան շատ կոնֆլիկտներ և դժվար իրավիճակներ կարողանաք հաղթահարել, այնքան ավելի ուժեղ և կարծրացած կլինի ձեր կամքը:

Երկրորդ բանը, որ մեզ սովորեցնում է Պատոնի փորձը, այն է, թե որքան ոգեշնչող կարող են լինել արժանապատվությունն ու պատիվը: Վախին տրվելով, կորցնելով ոգու ներկայությունը, դուք անարգում եք ոչ միայն ինքներդ ձեզ՝ արատավորելով ձեր սեփական իմիջն ու հեղինակությունը, այլև ձեր ընտանիքը, թիմը, կազմակերպությունը: Դուք դավաճանում եք ընկերակցությանը: Լինելով մարդկանց թեկուզ շատ փոքր խմբի ղեկավար՝ դուք պետք է գիտակցեք մի կարևոր բան՝ մարդիկ նայում են ձեզ, գնահատում են ձեզ, կախված են ձեզանից: Եթե դուք տատանվեք, եթե կորցնեք ձեր ինքնատիրապետումը, ապա ձեզ համար անչափ ավելի դժվար կլինի ներդաշնակ ապրել ինքներդ ձեզ հետ:

Մի կորցրեք վստահությունը ձեր հանդեպ: Ամերիկյան քաղաքացիական պատե-րազմի սկզբում հյուսիսայինների բանակի հրամանատար գեներալ Ուլիս Սիմփսոն Գրանտը զգում էր, որ կորցնում է իր հեղինակությունը: Նրա ենթակաները մշուշոտ տեղեկություններ էին փոխանցում այն տարածքի մասին, որտեղ ընթանում էին

մարտական գործողությունները: Սպաները նեղություն չէին տալիս իրենց հրամանները կատարելու մեջ, իսկ գեներալները քննադատում էին նրա պլանները: Գրանտը խառնվածքով ստոիկ էր, բայց իրեն վստահված գորքերի նկատմամբ վերահսկողության կորուստը կհանգեցներ նրան, որ նա կկորցներ իշխանությունը նաև ինքն իր նկատմամբ: Եվ գեներալը սկսեց խմել:

Գրանտը դրանից արժեքավոր դասեր քաղեց և կիրառեց 1862-1863 թվականների Վիկսբերգյան արշավի ժամանակ: Այժմ նա անձամբ էր ծանոթանում մարտական դիրքերին: Նա ինքն էր ստուգում հետախուզության զեկույցները և ավելի ճշգրիտ էր ձևակերպում իր հրամանները, որպեսզի սպաները սողանքներ չունենան դրանց կատարումից խուսափելու համար: Որոշում կայացնելով Գրանտը անտեսում էր մյուս գեներալների կասկածները՝ վստահելով միայն սեփական կարծիքին: Հաջողության հասնելու համար նա նախ և առաջ պետք է հաստատեր իր հավատը իր հանդեպ: Անգործության զգացումն անհետացավ, և դրա հետ մեկտեղ անհետացավ նաև ներսից կրծող անհանգստությունները:

Հանդուրժեք հիմարներին առանց գրգռվածության: Ջոն Չերչիլը՝ Մալբորոյի դուքսը, մարդկության պատմության լավագույն գորահրամանատարներից մեկն էր: Հանճարեղ մարտավարը և ռազմավարը աչքի էր ընկնում անգլոգական սառնասրտությամբ և ոգու ներկայությամբ: 18-րդ դարի սկզբին նա ղեկավարում էր Անգլիայի, Հոլանդիայի և Գերմանիայի միացյալ զորքերը Ֆրանսիայի դեմ պատերազմում: Նրա հրամանատարության տակ գտնվող գեներալները գունատ կերպարներ էին՝ անվճռական, բավականին սահմանափակ: Նրանք պատշաճ ուշադրություն չէին դարձնում Չերչիլի պլաններին և մտահղացումներին, նրանք ամենուր վտանգ էին տեսնում, և ամենափոքր ձախողումը նրանց հունից դուրս էր հանում: Բացի այդ, յուրաքանչյուրը փորձում էր առաջ տանել սեփական երկրի շահերը՝ հաճախ ի վնաս ընդհանուր գործի: Նրանք ոչ հեռատեսություն ունեին, ոչ էլ համբերություն՝ իսկական հիմարներ:

Դուքսը՝ փորձառու և նուրբ պալատականը, երբեք կոնֆլիկտի մեջ չէր մտնում նրանց հետ: Նրանց վրա ճնշում գործադրելու կամ իր կարծիքը պարտադրելու փոխարեն, նա նրանց վերաբերվում էր երեխաների պես, նույնիսկ թողտվության էր հրահրում նրանց, բայց միևնույն ժամանակ իր հաշվարկներում երբեք նրանց չէր ապավինում: Ժամանակ առ ժամանակ նա նրանց ոսկոր էր նետում՝ ընդունելով նրանց առաջարկած ինչ-որ մանրուք կամ ձևացնելով, թե կիսում է նրանց մտահոգությունները: Բայց ոչ մի դեպքում նա չէր բարկանում և իրեն թույլ չէր տալիս գրգռվել: Հունից դուրս գալով նա կկորցներ ինքնատիրապետումը, իսկ դա կարող էր վնասակար ազդեցություն ունենալ ամբողջ արշավի ընթացքի վրա: Նա ստիպեց իրեն հանգիստ և ընկերական մնալ: Նա գիտեր, որ դա հիմարների հետ գործ ունենալու լավագույն միջոցն է:

Կարևոր է հասկանալ, որ չես կարող լինել ամենուր և պայքարել բոլորի հետ: Ձեր ժամանակը և էներգիան սահմանափակ են, և դուք պետք է սովորեք, թե ինչպես դրանք խնայողաբար ծախսել: Ուժասպառությունն ու խափանումները կարող են խաթարել ոգու ներկայությունը պահպանելու կարողությունը:

Վանիք խուճապը, կենտրոնացիր պարզ խնդիրների վրա: Վախեցնող հանգամանքներում երևակայությունը խաղարկվում է՝ մեր առջև ուրվագծելով մեկը մյուսից ավելի անհանգստացնող պատկերներ: Դուք պետք է զսպեք ձեր սեփական երևակայությունը, չնայած, հասկանալի է, որ դա ավելի հեշտ է ասել, քան անել: Հաճախ հանգստանալու և ինքներդ ձեզ տիրապետելու լավագույն միջոցը ինքներդ ձեզ

ստիպելն է կենտրոնանալ համեմատաբար պարզ բաների վրա: Դա կարող է լինել ինչ-որ հանգստացնող ծես, միապաղաղ և ծանոթ զբաղմունք, մի բան, որը ձեզ լավ ծանոթ է և հեշտությամբ հաջողվում է: Սա կօգնի հասնել կենտրոնացմանն ու հանգստությանը: Կենտրոնացումն անհանգստությանը տեղ չի թողնում, թույլ չի տալիս երևակայությանը որպեսզի խաղարկվի: Այժմ, վերականգնելով հոգեկան հավասարակշռությունը, կարող եք գլուխ հանել ձեզ անհանգստացնող խնդիրը: Վախի կամ հուզմունքի առաջին իսկ նշանների դեպքում կիրառեք այս տեխնիկան, մինչև այն սովորություն դառնա:

Կրիտիկական պահին երևակայությունը զսպելու ունակությունը կարևոր հմտություն է:

Թույլ մի տուր որպեսզի վախեցնենք քեզ: Երկչոտությունը միշտ սպառնալիք է սառնասրտությանը: Բացի այդ, բավականին դժվար է պայքարել այս զգացումի դեմ:

Որպեսզի թույլ չտաք ձեզ վախեցնել, շատ կարևոր է հիշել, որ գործ ունեք մահկանացուի հետ, ով ձեզանից ոչնչով չի տարբերվում, և դա իրականում ճիշտ է: Փորձեք ձեր առջև տեսնել մարդուն, այլ ոչ թե առասպելին: Պատկերացրեք նրան որպես երեխա, հիշեք, որ այս մարդը, ինչպես ցանկացած այլ մարդ, լի է բարդություններով: Կարճացրեք այն ձեր հասակին համապատասխան, դա կօգնի ձեզ պահպանել հոգևոր խաղաղությունը:

Ձարգացրեք վեցերորդ զգայարանը: Սառնասրտությունը որոշվում է ոչ միայն դժվար պահերին ձեզ օգնության հասնելու մտքի ունակությամբ, այլ նրանով, թե որքան արագ է դա տեղի ունենում: Եթե ճիշտ որոշումը ձեր մտքին գա հաջորդ օրը, դրանում ոչ մի լավ բան չկա: Այս դեպքում օպերատիվությունը նշանակում է ուղեղի արագ արձագանքելու և հնարամիտ լուծումներ գտնելու կարողություն: Այսպիսի կարողությունը հաճախ համարվում է ինտուիցիայի նման մի բան, այն, ինչ գերմանացիներն անվանում են Fingerspitzengefühl («մատների ծայրով զգալ»):

Գերմանացի գեներալ Էրվին Ռոմելը, ով Հյուսիսային Աֆրիկայում (Երկրորդ համաշխարհային պատերազմի) ղեկավարում էր տանկային ռազմարշավը, ուներ բարձր ինտուիցիա: Նա կանխագգում էր, երբ են դաշնակիցները պլանավորում հարձակումը, և նույնիսկ կանխատեսում էր, թե որտեղից է հարված հասցվելու: Հարձակման գիծը ընտրելիս նա ինչ-որ գերբնական ձևով կռահում էր հակառակորդի թույլ կողմերը: Ճակատամարտի սկզբում, մինչև հակառակորդը կբացահայտեր ինքն իրեն, նա կարողանում էր ըմբռնել թշնամու ռազմավարական մտահղացումը:

Ռոմելի զինվորներին թվում էր թե գեներալը պատերազմի իսկական հանճար է: Նա իսկապես ուներ ավելի աշխույժ և ճկուն միտք, քան շատ-շատերը: Բայց Ռոմելը պարզապես գիտեր, թե ինչպես մեծացնել ռեակցիայի արագությունը, նա տիրապետում էր այնպիսի հնարքներին, որորնք օգնում էին ուժեղացնել իր ռազմական ինտուիցիան: Նախ, նա ազահորեն հավաքում էր հակառակորդի մասին բոլոր տեսակի տեղեկությունները՝ սպառազինության մանրամասներից մինչև թշնամու գեներալների հոգեբանական դիմանկարը: Երկրորդ, նա հիմնովին տիրապետում էր տանկերին, իսկական փորձագետ էր, ինչը նրան թույլ էր տալիս առավելագույն հնարավորություններ քանել մարտական տեխնիկայից: Երրորդ, նա ոչ միայն հիշում էր Հյուսիսային Աֆրիկայի անապատի քարտեզը մինչև մանրուքները, այլև թոչում էր ավագուհների վրայով՝ իրեն մեծ ռիսկի ենթարկելով, որպեսզի վերնից տեսնի և գնահատի առաջիկա մարտադաշտը: Վերջապես, նա չափազանց ուշադիր էր իր ենթակաների անձի նկատմամբ, միշտ զգում էր նրանց տրամադրությունը և հստակ գիտեր, թե ինչ են ակնկալում իրենից:

Ռոմելը ոչ միայն ծանոթանում էր իր ենթակաների անձնական գործերին, տեխնիկային, տեղանքին և թշնամուն, այլև մանրակրկիտ ուսումնասիրում էր ամեն ինչ: Նա մանրակրկիտ ուսումնասիրում էր իրավիճակն ու հանգամանքները, թափանցում էր մարդկանց հոգիների մեջ, փորձում էր հասկանալ, թե ինչն է նրանց առաջ մղում: Դրա շնորհիվ մարտի կեսին նա ստիպված չէր լարված մտածել իրավիճակի մասին: Տեղի ունեցածի ամբողջական և խորը ըմբռնումը նրա արյան մեջ էր՝ մատների ծայրերին: Նա տիրապետում էր ինտուիցիայի այս զարմանալի զգացողությանը՝ Fingerspitzengefühl-ին:

Անկախ նրանից, թե դուք օժտված եք Ռոմելի տաղանդներով, թե ոչ, դուք կարող եք զարգացնել ավելի արագ արձագանքելու ունակությունը, բացահայտել ինտուիցիան, որը, ըստ էության, բնորոշ է բոլոր կենդանիներին: Տեղանքին ծանոթ լինելը կօգնի ավելի արագ մշակել տեղեկատվությունը, քան հակառակորդը, ինչը մեծ առավելություն է: Սովորեք հասկանալ մարդկանց և փաստերը, հասնել իրերի բուն էությանը, այլ ոչ թե սահել մակերեսով: Մա կօգնի տեսնել խնդիրը այլ տեսանկյունից, կենտրոնանալ ոչ այնքան գիտակցության, որքան ենթագիտակցության և ինտուիցիայի վրա: Մշակեք ակնթարթորեն որոշումներ կայացնելու ունակություն, վստահեք վեցերորդ զգայարանին՝ «մատների ծայրերով զգալը», և դուք կստանաք անգնահատելի առավելություն մտավոր պատերազմում՝ մտքերի այս բլիցկրիգում: Դուք կկարողանաք կանխագուշակել ձեր հակառակորդների մտադրությունները, հարվածներ հասցնել՝ առանց ուշքի գալու ժամանակ տալու:

Եվ վերջապես, սխալ կլինի հավատալ, որ սառնասրտությունը անհրաժեշտ է միայն կարիքի պահին, որ այդ որակը կարելի է միացնել և անջատել ըստ ցանկության: Հասեք նրան, որ այն դառնա ձեր անբաժանելի հատկանիշը: Վստահությունն ու անվախությունը անհրաժեշտ են խաղաղ ժամանակ, ոչ պակաս, քան պատերազմի ժամանակ: Ֆրանկլին Դելանո Ռուզվելտը ցույց տվեց զարմանալի ներքին ամրություն և ոգու ներկայություն ոչ միայն ճնշման տակ, ոչ միայն Մեծ դեպրեսիայի և Երկրորդ համաշխարհային պատերազմի ծանր ժամանակներում, այլև առօրյա կյանքում: Դա նրան օգնում էր ընտանիքի, իր կառավարության նախարարների հետ հարաբերություններում, նույնիսկ պոլիոմիելիտով խեղված մարմնի պարագայում: Որքան ավելի հմուտ եք դառնում պատերազմական խաղերում, այնքան ավելի մեծ է ձեր նոր աշխարհայացքը: Եվ երբ ճգնաժամը գա, դուք խուճապի չեք մատնվի: Մարզված և սթափ բանականությունը ձեզ չի հուսահատեցնի: Եթե սառնասրտությունը սովորություն է դարձել, այն երբեք չի լքի ձեզ:

ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ

Ոչ մի դեպքում չարժե կորցնել ինքնատիրապետումը, բայց դուք կարող եք դասեր քաղել այնպիսի իրավիճակներից, երբ ինքնատիրապետումը սպառնալիքի տակ է, որպեսզի իմանաք, թե ինչպես վարվել ապագայում: Ճանապարհ գտեք մարտի թեժ կետում հայտնվելու համար և հետևեք, թե ինչպես եք վարվում:

Ուսումնասիրեք ձեր սեփական թույլ կողմերը և մտածեք, թե ինչպես և ինչով կարող եք փոխհատուցել դրանք: Նա, ով երբեք ստիպված չի եղել կորցնել ոգու ներկայությունը, գտնվում է վտանգավոր իրավիճակում: Մի օր նրան կարող են անակնկալի բերել, և անկումը սարսափելի կլինի: Բոլոր հայտնի հրամանատարները՝ սկսած Հուլիոս Կեսարից մինչև Պատոն, ունեցել են երկչոտության, ինքնատիրապետումը կորցնելու պահեր, սակայն, երբ նրանք վերականգնեցին կորցրած պահերը

ավելի ուժեղացան: Որքան դժվար է ձեզ հավասարակշռությունից հանել, այնքան ավելի լավ կարող եք պատրաստվել հաջորդ անգամ դա թույլ չտալուն:

Փորձեք չմոլորվել, չկորցնել ձեր մտքի ներկայությունը կրիտիկական պահերին, բայց միևնույն ժամանակ հաճելի կլինի հասնել նրան, որ դա տեղի ունենա ձեր թշնամու հետ: Հիշեք, թե ինչն է ձեզ թամբից ցած նետում և կիրառեք այն ձեր հակառակորդի նկատմամբ: Անակնկալի բերեք նրան, ստիպեք նրան գործել՝ չհասցնելով պատշաճ կերպով պատրաստվել: Ոչինչ հավասարակշռությունից չի հանում, որքան առանց նախապատրաստվելու գործելու անհրաժեշտությունը: Ուսումնասիրեք նրա թույլ կողմերը, պարզեք, թե ինչն է նրան հուզում և տվեք կրկնակի չափաբաժին: Որքան ուժեղ է թշնամու խառնաշփոթը, այնքան ավելի հեշտ է նրան ճիշտ հունից հանել:

- Սկիզբը: 1) [ՊԱՏԵՐԱԶՄ ՀԱՅՏԱՐԱՐԵՔ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՆ: ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ](#)
2) [ՄԻ ԱՊՐԻՐ ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՎ. ՄՏԱՎՈՐ ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ](#)

Աղբյուրը: <https://www.litres.ru/book/robert-grin/33-strategii-voyny-624835/chitat-onlayn/?page=4>